

բերանացի խոստում կու տար Փորթուկալի թագաւորին՝ իր երկիրներուն մէկ երրորդը յանձնել և իր հպատակները Հոռմի Պապին հնազանդեցնել, եթէ ան օգնէր իրեն՝ Թուրքերուն և Արաբներուն դէմ և իրմէ կորզուած հողերը վերադարձնել տար: Դաւիթ թագաւոր կամ Հեղինէ կայսրուհի Մատթէոսի յանձնած էր Փորթուկալի Էմմանուէլ թագաւորին ուղղեալ նամակներ, որոնց մէջ կ'ըսէր. թէ իր բուն նպատակը բերանացի պիտի բացատրէր Մատթէոսի, զոր կ'անուանէր իր մտերիմ խորհրդականը և իր բոլոր գաղտնի նպատակներուն գիտակ միակ անձնաւորութիւնը: Կը խնդրէր հաւատալ իր դեսպանին ըսածներուն, իբր իր խօսքերուն: Նամակներուն մէջ սակայն կային մասեր, որոնք զգուշաւոր չէին, վանդի լեցուն էին մահմետականներու հասցէին հայհոյանքներով ու նախատինքներով, և կը հրաւիրէին Փորթուկալի թագաւորը՝ իր բոլոր ուժերով յարձակելու անոնց վրայ: Այդ անխոհեմ գրուածութիւնները կրնային վտանգել Մատթէոսը, որ եթէ Թուրքերուն ձեռքը իյնար, կրնար իր կեանքը վրայ տալ իբր դաւաճան: Այս պատճառով՝ Մատթէոս նամակները խիստ գաղտնի կը պահէր: Նաեւ ասոր համար՝ երբ Հնդկաստան հասաւ, մերժեց զանոնք ցոյց տալ նոյնիսկ փորթուկալցի պաշտօնատարներուն: Ուստի՝ լրտես կարծուելով Դաբուլի կառավարիչէն, բանտարկուեցաւ:

Հնդկաստանի փոխարքայ Ալբուգուէրչէ ծովակալը, որ յաւակնութիւններ ունէր եթովպիան օգտագործելու, լսելով որ իբր դեսպան մէկը եկած է Հնդկաստան, աճապարեց երթալ Կօայէն և ազատեց Մատթէոսը, որ սակայն մերժեց իր պաշտօնաթուղթերը ցոյց տալ նաեւ փոխարքային և ասոր համար դարձեալ